

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

17 նոյեմբերի, 2021 թ.

N 64 - Լ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողովի կանոնադրության 9.1 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողովի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

## **Հավելված**

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ  
հաշվապահների պալատ»  
հասարակական կազմակերպության խորհրդի  
2021թ. նոյեմբերի 17-ի N 64 - Լ որոշման

### **«Հայաստանի աուդիտորների եվ փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողովի 2022թ. գործունեության ծրագիր**

#### **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողովի (այսուհետ՝ Որակի գնահատման հանձնաժողով) 2022թ. գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) կազմվել է ի կատարումն Որակի գնահատման հանձնաժողովի կանոնադրության 9.1 կետի՝ նպատակ ունենալով ապահովել հանձնաժողովի գործառույթների արդյունավետ իրականացումը և Պալատի խորհրդի կողմից Որակի գնահատման հանձնաժողովի գործունեության նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացումը:

#### **ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ և ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

Գործունեության ծրագրի հիմքում դրված են Որակի գնահատման հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված ինչպես հիմնական, այնպես էլ այլ գործառույթներ.

Հիմնական գործառույթներ.

- Պալատի անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման իրականացում,
- Պալատի անդամ հանդիսացող փորձագետ հաշվապահներին և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորներին ներկայացվող պահանջների պահպանման արտաքին գնահատման իրականացում,
- Պալատի խորհրդի կողմից տրված հանձնարարականների կատարում:

Այլ գործառույթներ.

- Համագործակցություն Պալատի մյուս հանձնաժողովների հետ,
- Օժանդակություն Պալատի անձնակազմին,
- Համագործակցություն պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա համանման կառույցների հետ:

Իրականացվող միջոցառումների պլանավորումն իրականացվել է՝ ելնելով Որակի գնահատման հանձնաժողովի կանոնադրության 2-րդ և 3-րդ կետերով սահմանված նպատակներից, գործառույթներից և հաշվետվողականության պահանջներից:

## ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Սույն ծրագրում օգտագործվող հասկացություններ և հապավումներ՝

**Գնահատման ընթացակարգեր՝** աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորների նկատմամբ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» և «Աուդիտորական գործունեության մասին» օրենքներով ներկայացվող պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգեր:

**Գնահատում՝** աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորների նկատմամբ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» և «Աուդիտորական գործունեության մասին» օրենքներով ներկայացվող պահանջների պահպանման արտաքին գնահատում:

**Պալատ՝** «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպություն:

**ՇՄՁ դասընթաց՝** շարունակական մասնագիտական զարգացման դասընթաց:

h/h	Գործառույթ	Միջոցառում	Ժամկետ
1	Աջակցել գնահատման ընթացակարգեր մշակող մարմինն գնահատման ընթացակարգերի մշակման գործընթացում:	<ul style="list-style-type: none"> <li>Համապատասխան մարմնի ներակայացուցիչների և հանձնաժողովի անդամների հանդիպումների կազմակերպում՝ ընթացակարգերի մշակման գործընթացում ի հայտ եկած խնդիրների քննարկման նպատակով:</li> <li>Պալատի կարգապահական հանձնաժողովի հետ համատեղ (ըստ ցանկության՝ նաև Պալատի խորհրդի անդամների մասնակցությամբ) Պալատի կորպորատիվ անդամների ներկայացուցիչների հետ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Ըստ անհրաժեշտության</li> <li>Մարտ 2022</li> </ul>

		<p>հանդիպում-քննարկումների կազմակերպում՝ որակի արտաքին գնահատման գործընթացի ընթացիկ վիճակի վերաբերյալ իրազեկման նպատակով:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Համապատասխան մարմնի ներկայացուցիչների հետ շարունակական կապի պահպանում:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ընթացակարգերի մշակման ողջ ընթացքում</li> </ul>
2	Նախորդ տարվա գործունեության ամփոփում	Հրավիրել հանձնաժողովի նիստ՝ հանձնաժողովի 2021թ գործունեության վերաբերյալ հաշվետվության քննարկման, հաստատման և Պալատի խորհրդին ներկայացման նպատակով՝ հանձնաժողովի կանոնադրության 9.2 կետի համաձայն:	31 Մարտի 2022
3	ՇՄՁ դասընթացներ	Կազմակերպել և անցկացնել սեմինարներ աուդիտորական գործունեության հետ կապված թեմաներով:	<ul style="list-style-type: none"> <li>• Փետրվար 2022</li> <li>• Ապրիլ 2022</li> <li>• Հունիս 2022</li> <li>• Հուլիս 2022</li> <li>• Սեպտեմբեր 2022</li> <li>• Նոյեմբեր 2022</li> </ul>
4	Ամփոփիչ հանդիպում-քննարկում Պալատի Կարգապահական հանձնաժողովի անդամների հետ	Կազմակերպել Պալատի կարգապահական հանձնաժողովի հետ համատեղ (ըստ ցանկության նաև՝ Պալատի խորհրդի անդամների մասնակցությամբ) Պալատի կորպորատիվ անդամների ներկայացուցիչների հետ հանդիպում-քննարկում՝ գնահատման ընթացակարգերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվության տրամադրման և հնարավոր հարցերի քննարկման նպատակով:	Օգոստոս 2022
5	Գնահատման հաշվետվությունների ուսումնասիրում, հաստատում	Կազմակերպել հանձնաժողովի նիստ՝ հանձնաժողովի կանոնադրության 5.2 կետի համաձայն:	Յուրաքանչյուր հաշվետվության ստացումից հետո

6	Հաջորդ տարվա գործունեության ծրագրի կազմում	Հաջորդ տարվա գործունեության տարեկան ծրագրի կազմում և ներկայացում Պալատի խորհրդի հաստատմանը՝ հանձնաժողովի կանոնադրության 9.1 կետի համաձայն:	15 նոյեմբերի 2022
7	Գործնական կապեր հաստատել օտարերկրյա համանման կառույցների համապատասխան հանձնաժողովների կամ այլ մարմինների հետ:	Կապեր հաստատել Ռուսաստանի Դաշնության համանման կառույցի հետ՝ օգտագործելով ինչպես հանձնաժողովի անդամների անձնական կապերը, այնպես էլ համացանցի միջոցով:	Տարվա ընթացքում
8	Պալատի խորհրդի կողմից հանձնաժողովին տրված հանձնարարականների կատարում	Միջոցառումներն ըստ անհրաժեշտության	2022թ. ընթացքում
9	Ամփոփիչ հանդիպում-քննարկում Պալատի Կարգապահական հանձնաժողովի անդամների հետ:	Կազմակերպել Պալատի կարգապահական հանձնաժողովի հետ համատեղ (ըստ ցանկության՝ նաև Պալատի խորհրդի անդամների մասնակցությամբ) Պալատի կորպորատիվ անդամների ներկայացուցիչների հետ հանդիպում-քննարկում՝ գնահատման ընթացակարգերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվության տրամադրման և հնարավոր հարցերի քննարկման նպատակով:	Դեկտեմբեր 2022